



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻՍ ՅԱՏՈՒԿ ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ՝ Ս. ՏՐԴԱՏ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՈՒ Ս. ԱՃԽԵՆ ԹԱԳՈՒՅԻԻՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Ուրախ ենք յայտնելու մեր ազնիւ ժողովուրդին, որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգ. Կարչութեան կողմէ կատարուած դասաւորումով մը, ու հաւանութեամբ Ս. Վթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արքամ Ա. Կաթողիկոսի, մեր Թեմին մէջ հաստատուած է յատուկ շքանշանի դրութիւն մը, ըստ արժանուոյն պատուելու համար մեր ժողովուրդին նուիրեալ ծառայողները: Նոր շքանշանները կը կոչուին Յայաստան Աշխարհի առաջին քրիստոնեայ արքային ու թագուհիին՝ Ս. Տրդատի եւ Ս. Աշխենի անուններով:

Յունիսի վերջին շաբաթավերջը տօնն էր Ս. Տրդատ թագաւորին ու Ս. Աշխեն թագուհիին: Մեր Եկեղեցին տօնախմբեց այս տօնը, որ նաեւ տօնն է Ազգ. Առաջնորդարանին Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան: Շաբաթ, 26 Յունիսի երեկոյեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ Ազգ. Առաջնորդարանին մատրան մէջ: Պատարագեց Գերպ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Ծանօթ է որ նոյն օրերուն, Առաջնորդ Սրբազանը քանատա կը գտնուեր, միանալու համար Վեհափառ Յայրապետի շքախումբին: Քանատայէն իր վերադարձին ետք, Առաջնորդ Սրբազանը այցելութիւն մը տուաւ Ազգ. Առաջնորդարանի բարերարուիի Տիկին Աշխեն Փիլաւճեանի, շնորհաւորելու համար անոր անուանակոչութեան տօնը: Ծանօթ է որ Տիկին Ա. Փիլաւճեան բարերարուիին է Առաջնորդարանին մատրան: Այս առիթով, եւ առ ի գնահատանք ազնիւ բարերարուիին նուիրաբերումներուն եւ Ազգ. Առաջնորդարանին ու մեր կրթական հաստատութեանց անոր զօրակցութեան, Առաջնորդ Սրբազանը «Ս. Աշխեն Թագուհի» շքանշանի առաջին օրինակը շնորհեց Տիկին Աշխեն Փիլաւճեանի: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերպ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Ներկայ էին ազնիւ բարերարուիին զաւակները՝ Տեալը Վահրիճ եւ Բեգլար Փիլաւճեան ու իրենց տիկինները:

Տիկին Ա. Փիլաւճեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան, եւ այս առիթով, ինչպէս անցեալին, առատաձեռն նոր նուիրատուութիւն մը կատարեց Ազգ. Առաջնորդարանի:

PRELACY ANNOUNCES ST. DERTAD AND ST. ASHKHEN MEDALS

By the request of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils, H.H. Catholicos Aram I has arranged for the Prelacy to have its own medals with which to honor deserving individuals serving within the community. The medals are named St. Dertad and St. Ashkhen, in honor of the first Christian king and queen of Armenia.

The feast of St. Dertad and St. Askhen, which is also the name day of the Prelacy Chapel, was celebrated on the last weekend of June. On June 26th, Divine Liturgy was celebrated at the Chapel by Very Rev. Fr. Muron Aznikian. During this time, the Prelate was in Canada for the Pontifical visit of His Holiness.

Upon his return, the Prelate visited Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian, to offer well wishes on what was her name day as well. During the visit, the Prelate awarded Mrs. Pilavjian the first St. Ashkhen Medal, in recognition of her long-time support of the Prelacy and community. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian accompanied the Prelate on this visit. Also present were Mrs. Pilavjian's sons Vahrij and Peklar with their wives. Mrs. Pilavjian thanked the Prelate for the honor and made a generous donation to the Prelacy on this occasion.